ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա. Ղազուկյան

«31» օգոստոսի 2023թ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռի Վանաձոր

Մարզ համայնք

__Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմն. դպրոցի 8Գ-րդ

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Մ. Արզումանյան__

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) _Դասարանում սովորում են տարվա սկզբում 32 աշակերտներ՝ 16տղա և 16աղջիկ: Ընդհանուր մթնոլորտը ջերմ է: Աշակերտները բանիմաց են, սիրում են սովորել:Բավականին աշխույժ են, բայց ոչ անկարգ:_____Դասարանում ունենք ԿԱՊԿՈՒ աշակերտ՝ Միրզոյան Մերի: Դասարանի ավագն է Մելիքյան Մարինան:
2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ _Ներկայացնել դպրոցի կարգ ու կանոնը, աշակերտի պարտականությունները և իրավունքները: Հետևել աշակերտների հաճախումներին, ծնողական ժողովներին հետամուտ լինել աշակերտների ուսումնական որակի բարձրացմանը: Մեծ ուշադրություն դարձնել հայրենասիրական դրսևորումներին, մարդկային որակներին, համագործակցությանը, գեղագիտական, աշխատանքային դաստիարակությանը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն- Անցկացնել զրույցներ Հայ առաքելական եկեղեցու, քրիստոնեական դաստիարակության շուրջ, դրա դերի և նշանակության մասին թեմաներով: Ներկայացնել քրիստոնեական տոների՝ Սուրբ զատիկ, Սուրբ Ծնունդ, Վարդավառ, Խաղողօրհնեք, խորհուրդը հայ ժողովրդի կյանքումԾանոթացնել այլ ազգերի հավատալիքներին, նրանց ավանդույթներին: Բացատրել և սովորողներին զերծ պահել տարբեր աղանդների ազդեցությունից: Երեխաների մեջ սերմանել բարություն,փոխադարձ հարգանք, հանդարտություն, արդարամիտ լինելու հատկությունը: Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների հայրենասիրական ոգու բարձրացմանը, օրինապաշտ ու ազգասեր քաղաքացու ձևավորմանը: Հանդես գալ հայրենանպաստ գործունեությամբ՝ ճանաչողական էքսկուրսիաներ կազմակերպել տարբեր եկեղեցիներ՝ բացահայտելու հայ ժողովրդի մտքի թռիչքները:

3.2 Գեղագիտական դաստիարակություն
Հաճախակի կազմակերպել և մասնակցել գեղարվեստամշակույթային միջոցառումներին, կազմակերպել դաստիարակչական բնույթի ֆիլմերի դիտումներ, այցելել գեղագիտական կենտրոններ՝ պատկերասրահներ, գրողների տուն-թանգարաններ՝ բարձրացնելու աշակերտների գեղագիտական ճաշակը, մղելու ստեղծագործական մտածողության ձևավորման:
3.3Ռազմահայրենասիրական դաստիարակություն- Երեխաների մեջ սերմանել հայրենասիրական դաստիարակություն: Սեփական օրինակն է դառնում աշակերտի համար օրինակ – այս սկզբունքով առաջնորդվելով՝ սերմանել սեր հայրենիքի, պետության նկատմամբ: Հաճախակի կազմակերպել բանավեճեր, քննարկումներ անհատ –հասարակություն, անհատ-պետություն, հայրենիք թեմաներով: Զրույցների միջոցով աշակերտներին ծանոթացնել մեր հայրենիքի հիշարժան վայրերին,դիտել ֆիլմեր Արցախյան հերոսամարտի,Հայոց ցեղասպանության, Հայոց պետականության ձևավորման, Հայկական թագավորությունների մասին: Սովորեցնել սիրել հայրենիքը,հերոսաբար պայքարել հայրենի հողի համար նաև թիկունքում: Կազմակերպել հանդիպումներ Արցախյան 44 օրյա պատերազմի մասնակիցների հետ, տարբեր ոլորտներում աշխատող նվիրյալների հետ: : Այցելել 44օրյա պատերազմի զոհերի պուրակ, Հայրենական մեծ պատերազմին նվիրված հուշակոթող, Մայիսյան

հերոսամարտերի հուշակոթողներ՝ Սարդարապատ, Բաշ-Ապարան, Կոտրած եկեղեցի: Մասնակցել տարբեր մրցույթների՝նվիրված մեր հայրենիքին՝ երաժշտական, նկարչական, ինտելեկտուալ: Այցելել:

3.4Ֆիզիկական դաստիարակություն

Աշակերտների շրջանում բարձրացնել ֆիզկուլտուրա առարկայի դերն ու նշանակությունը, առողջ ապրելակերպի կարևորությունը, խրախուսել սպորտային խմբակներ հաճախող աշակերտներին,անմիջական մասնակցություն ունենալ դպրոցում, համայնքում, հանրապետությունում կազմակերպվող սպորտային ուսումնամարզական միջոցառումներին: Կազմակերպել զրույց-քննարկումներ ՝Հեռու մնանք վնասակար սովորություններից թեմայով՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչների մասնակցությամբ:

3.5Աշխատանքային դաստիարակություն- Հարգանք սերմանել աշխատանքի նկատմամբ, կյանքի գլխագիր դարձնել՝ Աշխատանքը բարիք է գաղափարը:Հարգանք սերմանել ծնողների կատարած աշխատանքի նկատմամբ, գնահատել նրանց աշխատանքը, փորձել օգտակար լինել շրջապատին:: Ինքնուրույն ստեղծագործական աշխատանքների համար խրախուսել աշակերտներին:Կազմակերպել մաքրության շաբաթ դասարանում, սահմանել հերթապահություն, խրախուսել առավել մաքրասերներին: Մասնակցել Համադպրոցական, համաքաղաքային շաբաթօրյակներին, բարեկարգել դասարանը, մասնակցել ծառատունկի:

Բնապահպանական դաստիարակություն –Դասարանում աճեցնել բույսեր, ապահովել դրանց խնամքը, մասնակցել բակային ծառատունկի, գարնանը աճեցնել ծաղիկներ: Կազմակերպել զրույցներ բնության պահպանության թեմայով՝ ընդգրկելով նաև կենսաբանության ուսուցչին: Այցելե Վանաձորիլ բուսաբանական այգի, Ստեփանավանի դենդրոպարկ՝ ծանոթանալու տարբեր բույսերի, ծառերի աճման պայմաններին, կյանքի տևողությանը:

3 ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ նաև աշակերտների մասնակցությամբ: Ուսումնասիրել աշակերտների ընտանիքները, սերտորեն համագործակցել ծնողների հետ՝ ապահովելու ուսումնադաստիարակչական աշխատանքների բարձր որակները: Կապ պահպանել դպրոցի հոգեբանի հետ և առաջացած խնդիրների ժամանակ անցկացնել հոգեբանական վերլուծություն: Ծնողներին պարբերաբար ընթացքի իրազեկել աշակերտների վարքի,ուսումնառության մասին: Կատարել տնայցեր, ծանոթանալ ընտանեկան, սոցիալական պայմաններին, ընտանիքի առանձնահատկությունները ուսումնասիրել, կոնֆլիկտային իրավիճակներումփորձել հանդես գալ ի շահ աշակերտի:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Գիտելիքի օր միջոցառման մասնակցություն	սեպտեմբեր	Դասղեկ,դասարան
II	Մեծանուն հայ աստղագետ Վ.Համբարձումյանի ծննդյան օր: «Կտակի ընթերցում զրույց	սեպտեմբեր	Դասարան, դասղեկ
III	32 ամյա անկախ Հայաստան տեղեկատվական դաս	սեպտեմբեր	Դասարան, դասղեկ
IV	2020թ.-ի պատերազմի զոհերի հիշատակի մոմավառություն, ծաղիկների խոնարհում	սեպտեմբեր	Դասարան
V	Շնորհավոր տոնդ, սիրելի ուսուցիչ մաղթանքներ ուսուցիչներին	հոկտեմբեր	Դասղեկ-դասարան

VI	Վատ սովորությունների հետևանքները- զրույց-քննարկում	հոկտեմբեր	Դասղեկ, դասարան
VII	Ես սիրում եմ կարդալ-մտքերի փոխանակում	հոկտեմբեր	Դասարան
VIII	Ում են տալիս Նոբելյան մրցանակ- տեղեկատվական դաս	հոկտեմբեր	Դասարան
IX	Բանավեճ՝ Իմ կարողություններն ու ձեռքբերումները	նոյեմբեր	Դասղեկ
X	Հայկական ավանդույթներ, որոնցով հպարտանում ենք	նոյեմբեր	Դասարան-դասղեկ
XI	Բանավեճ՝ Մեր հայրենիքի նվիրյալ անհատներ- զրույց `Նժդեհ, Անդրանիկ Օզանյան...	նոյեմբեր	Դասղեկ-դասարան
XII	Հարցաթերթ՝ Աշակերտի վերաբերմունքն ուսման և ուսումնական առարկաների հանդեպ	նոյեմբեր	Դասարան
XIII	Ինչպես պահպանել Երկիր մոլորակը	նոյեմբեր	Դասարան-դասղեկ, կենսաբ. ուսուցիչ
XIV	Այցելություն 1988թ. երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված խաչքարին	դեկտեմբեր	Դասղեկ, դասարան
XV	Անվտանգ համացանց, կիբեռանվտանգություն- քննարկում-զրույց, իրազեկում	դեկտեմբեր	Դասարան-դասղեկ, ինֆորմ. ուսուցիչ
XVI	Ձմեռնամուտ. խաղեր ձյունածածկ բակում: Մասնակցություն ամանորյա միջոցառումների	դեկտեմբեր	Դասարան
XVII	Առաջին կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների վերլուծություն	հունվար	Դասղեկ
XVIII	Հայաստան, ուզում եմ քեզ հայտնել իմ սերը- մտքերի ներկայացում, գեղեցիկ խոսքեր հայրենիքի մասին	հունվար	Դասարան-դասղեկ
XIX	Հայաստանի պաշտպանները երեկ, այսօր և վաղը	հունվար	Դասարան, դասղեկ
XX	Հովհաննես Թումանյան -155. նվիրում ենք գիրք	փետրվար	Դասղեկ-դասարան
XXI	Փաստագրական ֆիլմի դիտում `<< Հովհաննես Թումանյան Եվ սիրտ, և կամք, և միտք>>	փետրվար	Դասղեկ
XXII	Մայրենի լեզվի օր, մտքեր հայոց լեզվի մասին, պատի թերթի պատրաստում	փետրվար	Դասարան-դասղեկ
XXIII	«Մուտք փակուղի» ֆիլմի դիտում	փետրվար	Դասարան-դասղեկ
XXIV	Ծաղիկների խոնարհում ՎազգենՍարգսյանի արձանի մոտ՝ նվիրված սպարապետի ծննդյան օրվան	մարտ	Դասարան
XXV	Շնորհավորանքներ մայրերին տեսանյութի միջոցով	մարտ	Դասարան
XXVI	Ծանոթանում ենք ազգային տոներին. Սուրբ Զատկի տոնի նախապատրաստումը հայերի մոտ	մարտ	Դասղեկ, դասարան
XXVII	Պոեզիայի համաշխարհային օր. ասմունքում են աշակերտները	մարտ	Դասղեկ, դասարան
XXVIII	Ապրիլյան պատերազմ-ֆիլմի դիտում	ապրիլ	Դասարան,ՆԶՊ ուսուցիչ
XXIX	Անհատի բարեկրթությունը- սովորում ենք լինել բարեկիրթ	ապրիլ	Դասարան
XXX	<<Հայոց Մեծ եղեռն>>-զրույց, փաստագրական ֆիլմի դիտում	ապրիլ	Դասղեկ, դասարան
XXXI	Հուշարձանների, պատմական վայրերի պահպանության օր. էքսկուրսիա մոտակա պատմական հուշարձան	ապրիլ	Դասարան

XXXII	Ինչ գեղեցիկ է աշխարհը- մտքերի փոխանակում	մայիս	Դասղեկ,դասարան
XXXIII	Մայիսը հայոց հաղթանակների ամիսն է. Այցելություն Հայրենական մեծ պատերազմի հուշահամալիր	մայիս	Դասարան
XXXIV	II կիսամյակի և տարեկան աշխատանքների ամփոփում, էքսկուրսիայի կազմակերպում	մայիս	Դասղեկ,դասարան